ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնում (այսուհետ՝ Բաժին) փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքի համառոտ նկարագիրը

1) մասնակցում է ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվությունների կազմման և դրանք համապատասխան մարմիններին ներկայացնելու աշխատանքներին,

2) մասնակցում է Կոմիտեի կառավարման ապարատի և համակարգի ամենամյա պետական բյուջեով նախատեսված տարեկան ծախսերի նախահաշիվների կազմմանը, գանձապետական համակարգի միջոցով գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների՝ տարբեր ծրագրերով ֆինանսավորման իրականացմանը,

3) իրականացնում է գիտական կազմակերպությունների ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով ֆինանսական հաշվետվությունների ընդունման և հանձնման աշխատանքները,

4) մասնակցում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակներում իրականացվող թեմաների/ծրագրերի ամենամյա և ամենամսյա ֆինանսավորման աշխատանքներին՝ հայտերի ընդունում, պայմանագրերի հետ համեմատում, ֆինանսավորման իրականացում,

5) իրականացնում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով Կոմիտեի և մի քանի գիտական կազմակերպությունների՝ սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատակիցների (թվով 600 աշխատակից) վերաբերյալ առողջապահական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ձևավորման և վարման աշխատանքները,

6) մասնակցում է պետական բյուջեով իրականացվող դրամաշնորհային հատկացումների հետ կապված աշխատանքներին,

7) նախապատրաստում է իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, գրություններ, տեղեկանքներ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլն:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. Բարձրագույն կրթություն,

2. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

3. Clienttreasury ծրագրով աշխատելու հմտություններ,

4. ՀՀ հարկային օրենսգրքի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին», «Գիտական և

գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքների և իր գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ իրավական այլ ակտերի իմացություն:

Փորձագետ ներգրավելու ժամկետը և աշխատավարձի չափը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի ամսական աշխատավարձի չափը կազմում է 190.000 (մեկ հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:

Փորձագետի պարտականությունները

1) բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվություն,

3) պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. դիմում (**ձևը**),
2. անձնագիր (ՀԾ համարանիշ),
3. դիպլոմ (դիպլոմներ),
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
5. զինվորական գրքույկ (առկայության դեպքում),
6. հայտարարություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(ձևը),**
7. ինքնակենսագրություն,
8. այլ փաստաթղթեր:

Փորձագետի ընտրությունը կկատարվի դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, :

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին) կամ hr@scs.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին +37410210140 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2022 թվականի նոյեմբերի 4-ը: